«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# *Ավարտական հետազոտական աշխատանք*

**Թեմա՝** Մուրացանի <<Առաքյալը>> վիպակի ուսուցման մեթոդիկան

**Առարկա՝** Հայոց լեզու գրականություն

**Ուսուցիչ՝** Քնարիկ Գալստյան

**Դպրոց՝** Երևանի Ա. Իսահակյանի անվ. հ.16 ավագ դպրոց

**Ղեկավար՝** Թամարա Թովմասյան

**ԵՐԵՎԱՆ – 2023**

# Բովանդակություն

Ներածություն _____3

Կենսագրական տեղեկություններ Մուրացանի մասին_____4

<<Առաքյալը>> վիպակի սյուժեն և վերլուծությունը _____6

Խմբային աշխատանքի նկարագրություն _____12

Եզրակացություն _____18

Օգտագործված գրականության ցանկ _____19

# Ներածություն

Ընտրելով <<Մուրացանի <<Առաքյալը>> վիպակի դասավանդման մեթոդիկան>> թեման՝ ցանկացել եմ աշակերտների մեջ առաջացնել հետաքրքրություն մտավորականության գյուղափրկիչ ծրագրերի առաքելության իրենց նպատակի հստակ պատկերացման մասին:

Իրականությունը և անհատը, գյուղը և առաքյալը կանգնում են դեմառդեմ: Աստիճանաբար խզվում է միացնող կապը, և երկուստեք դառնում են հակոտնյաներ:

<<Այս ժողովրդի կյանքն ու վիճակը,- ասում է Կամսարյանը,- քսաներեք դար առաջ այսպես է նկարագրել Քսենոփոնը, քսաներեք դար հետո էլի այսպես կնկարագրի մի այլ Քսենոփոն: Այստեղ դու ոչինչ փոխել չես կարող>>:

Այսինքն՝ հավիտենական անշարժություն, որտեղ ապարդյուն է առաքելության խորհուրդը;

## Կենսագրական տեղեկություններ Մուրացանի մասին

Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) 19-րդ դարի հայ գրականության խոշորագույն դեմքերից է: Ծնվել է 1854թ. Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Շուշի քաղաքում, գյուղատնտես արհեստավորի ընտանիքում: Մուրացանի գրագիտությունը, տաղանդի զարգացումը հիմնականում ինքնակրթության և տառապագին աշխատանքի արդյունք էր:

<<Եթե ես նյութական մի փոքրիկ ապահովություն ունեցած լինեի և այդ մեքենական աշխատության փոխարեն գրական աշխատությամբ պարապեի, քանի հատորներ կունենայի այժմ: Գիտեք, թե ինչ մեծ վիշտ է այս ինձ համար>>,- գրել է Մուրացանը: Մուրացանի կյանքը լի է եղել խնդիրներով, մեծագույն դժվարություններով, նաև առողջական խնդիրներով: Սև ծաղիկ հիվանդությունը նրան երկու տարեկանում հասցրել է մահամերձ վիճակի, բայց թաղման կարգ կատարելու ընթացքում նա կենդանության նշաններ է ցույց տվել և պատահականությամբ շարունակել ապրել: Ճակատագրի բերումով նա ամուսնացել է ծնունդով շուշեցի Ոսկեհատ Թավրիզյանի հետ. այս կինը դարձել է նրա մեծ և ճակատագրական սերը: Այդ սերը կործանող էր, քանի որ Ոսկին սիրային կապ ուներ <<Մշակի>> աշխատակից Սպանդար Սպանդարյանի հետ, ով նաև Մուրացանի մտերիմ ընկերն էր: Ոսկին մշտապես հեռու էր մնում Մուրացանից, թեև նրանք երեք երեխա ունեին:

Քայքայվում է նրա և' ընտանիքը, և' առողջությունը: Մուրացանը մահանում է Թիֆլիսի հոգեբուժարանում բացարձակ միայնության մեջ 1908թ.: Նա բազմաթիվ նամակներ է գրել կնոջը, և վերջին նամակի վերջին տողերն են. <<Ե՛կ իմ կյանք, իմ ուրախությու՛ն, իմ երջանկությու՛ն, իմ երկի՛նք և արքայությու՛ն, ե՛կ, որ կյանքը քաղցրությամբ ճանաչեմ>>:

Մուրացանը թողել է հարուստ գրական ժառանգություն, և նրա բոլոր երկերի թեման իր հայրենիքն էր, հայրենասիրությունը, ժողովրդի նկատմամբ ունեցած մեծագույն սերն ու նվիրումը:

<<Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան. լա՞վ եմ գրել, թե՞ վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքները հաղորդել>>,- գրում է Մուրացանը:

Մուրացանը ռոմանտիզմի ներկայացուցիչներից էր, և նրա գրվածքները հոգեհարազատ էին մարդկանց: Անգամ իր սերն ու կյանքը լեցուն էին ռոմանտիկական երանգներով. այդ երանգներն էր նա տեսել Ոսկեհատ աղջկա բնավորության մեջ, որն էլ դարձավ նրա մեծագույն ներշնչանքը և ստեղծագործելու ուժ տվողը:

## <<Առաքյալը>> վիպակի այուժեն և վերլուծությունը

Վիպակի վերլուծությունը ներկայացնենք առաքյալ բառի ստուգաբանական և բառակազմական բացատրությամբ:

Առաքյալ բառը կազմված է առ նախածանց + աք (գրաբարյան ոտք) արմատ + յալ վերջածանց կաղապարից:

Առաքյալները Հիսուսի այն աշակերտներն էին, ովքեր շրջում էին տեղից տեղ, երկրեերկիր և մարդկանց մեջ տարածում, քարոզում քրիստոնեությունը: Հայ ժողովուրդը այնքան մեծ հարգանք է ցուցաբերել այդ մարդկանց նկատմամբ, որ ստեղծել է անգամ հատուկ անուն՝ Առաքել:

Վիպակի համար բնաբան է ծառայել հետևյալ հատվածը.

<<Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյը հող բազում, և վաղվաղակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոց երկրին, ի ծագել արևու տապացավ, և զի ոչ գոյին արմատք չորացան>>:

Աւետ. Մատթ.

Ինչպես բնորոշ է ռոմանտիզմի ներկայացուցիչներին, վիպակում մեծ տեղ է հատկացված բնության նկարագրությանը , այն շքեղ զբոսարանների պատկերները, որոնք իրենց գիրկն էին կանչում բոլորին, բացի ծերուկ փիլիսոփայից և գեղեցկուհուց մերժված սիրահարից:

,,Այդպիսի մի գեղեցիկ երեկո ներքնահարկի ցածր առաստաղով սենյակում հավաքվել է ուսանողության ամենաընտիր մասը:

Այդ օրը քննարկվում էր այն հարցը, թե նրանցից ով ինչպես պիտի գործի կյանքը ասպարեզը մտնելուց հետո:

Քանի որ Մուրացանի գրական հայացքները սովորականից տարբեր էին, և նա պատկանում էր տենդենցիոզ (միտումնավոր) գաղափարախոսություն ունեցող

հեղինակների թվին, նա նույնպես գտնում էր, որ անհրաժեշտ է հայ գյուղը հեռու պահել կապիտալիզմի մուտքից: Նրա գաղափարախուսության մեջ կային նաև միամտության հասնող անիրական տարրեր: Նա գտնում էր, որ հայ գյուղացուն պետք է փրկեն կրթված և անձնազոհ անհատները:

,,Եվ այդ կրթված երիտասարդները, ներկայացնելով իրենց ծրագրերը, առաջարկում էին տարբեր ուղիներ՝ կապված իրենց հետագա անելիքների հետ:

Հանդես է գալիս Թիֆլիսում մեծացած երիտասարդ Պետրոս Կամսարյանը, որը հայտարարում է, որ ինքը գնալու է հեռու հայկական գյուղերը՝ օգնելու խեղճ ու անօգնական մարդկանց: Ըստ ներկաներից մեկի կարծիքի. <<Մենք որդիք ու անդամներ ենք, այնպիսի մի ազգի, որն ունի կարիքներ ու ցավեր, և մեր պարտքն է աշխատել ազգի անդաստանում>>:

Մուրացանը սիրով և հարգանքով է խոսում նորավարտ երիտասարդի մասին՝ ներկայացնելով նրան որպես նպատակային, բարեկիրթ ընկերասեր երիտասարդի:

Ըստ Մուրացանի Կամսարյանն ունի թե՛ խելոք գլուխ և թե՛ կարող ձեռքեր:

Դա մի ժամանակահատված էր, երբ հայ գյուղացին տառապում էր վաշխառուների ձեռքին, որոնք պարտքով տված չնչին գումարի դիմաց գյուղացիներից խլում էին ամեն ինչ և խղճի խայթ չէին զգում:

Գյուղացին անգրագետ էր, անպաշտպան, և ոչ ոք նրան չէր օգնում: Վիպակում կա մի հետաքրքիր գաղափար, որը արտահայտում է Կամսարյանը, և որը ըստ իս բանկային համակարգի նախատիպ ստեղծելու ծրագիր է. մտահղացումը Մուրացանինն է: Ես կարծում եմ, որ Մուրացանը, երկար տարիներ աշխատելով որպես հաշվապահ, հրաշալիորեն տիրապետում էր երևույթին և առաջ է քաշում իր ծրագիրը գլխավոր հերոսի միջոցով: Այն անվանում է <<Փոխատու գանձարան>>: Ահա Մուրացանի կարծիքը. <<Եթե հաջողեր նրան իրագործել, դրանով ոչ միայն վաշխառությունը կհալածվեր գյուղերից, այլև կստեղծվեր բարության մի գործ, որ կօգներ գյուղացուն

յուր աշխատությունն ու արդյունքը ոչ թե կեղեքիչների ձեռքը, այլ  յուր հարկի տակ ժողովելու>>:

Կամսարյանը, լինելով Մուրացանի գաղափարակիր հերոսը, ծրագրում է լավացնել գյուղի տնտեսական վիճակը, այդ փոխառու գանձարանի միջոցով օգնելու կարիքավորներին, նաև կազմակերպելու կրթության գործը: Եվ այդ ամենի համար Կամսարյանը պարտավորվում է զոհել նաև հորից ստանալիք ժառանգությունը:

Երիտասարդը գալիս է Թիֆլիս, ուր նրան սպասում էին ընտանեկան ջերմությունը, կարոտը, սերն ու ուշադրությունը: Դա այնպիսի տուն էր, որտեղ ապրող մարդիկ բոլորովին էլ տեղյակ չէին հայ գյուղացու աղքատությունից, չգիտեին ինչպիսի թշվառություն էր տիրում գյուղում, և ինչ խնդիրների մեջ էին այնտեղ ապրող մարդիկ:

Երիտասարդը մերժում է ծնողների առաջարկը՝ մեկնել Բորժոմում գտնվող ամառանոցը, և պատրաստվում է ճամփորդության:

Նրանց այցելում է գեղեցկուհի Ադելինան մոր հետ, որի նկատմամբ անտարբեր չէր երիտասարդը: Բայց կարողանում է իր մեջ ուժ գտնել՝ իրագործելու իր ծրագիրը:

Կառքով մեկնող երիտասարդը մեծ հիացմունք է ապրում՝ դիտելով շրջակա բնությունը և հիանալով նրա տեսարաաններով, լեռնային բնակավայրերով և Աղստև գետի շուրջ սփռված հրաշալի բնությամբ:

Մուրացանը նկարագրում է նաև Սեմյոնովկա գյուղի կոկիկ, կանաչազարդ, գեղեցիկ տեսարաններով հարուստ պատկերը՝ ներկայացնելով այդ գյուղում ապրող մալականների աշխատասիրությունը: Ես գտնում եմ, որ Մուրացանը բառացիորեն չի ընդգծել այն հանգամանքը, որ այդ գյուղում ապրում են ռուսներ, իսկ հայոց աշխարհը գտնվում էր ռուսների տիրապետության տակ: Հեղինակը ցանկացել է ընդգծել նաև այդ գյուղի բարգավաճման նկատմամբ պետական հովանավորությունը:

Երբ նկատում է Չիբուխլու գյուղը (այժմ՝ Ծովագյուղ), զարմանում է և ապրում առաջին հիասթափությունը:

<<Բոլոր տեղերում գետինը ծածկված էր աղբի շերտերով և աթարի (քակոր) փշուրներով: Այդ ընդարձակ աղբակույտի վրա փողոցների փոխարեն ընկած էին ինչ-որ ծուռ ու մուռ անցքեր, իսկ դրանց երկու կողմերում ցրված էին անկարգ ու շեղ թմբաձև հողածածկ բարձրություններ… Գյուղի ամբողջ տարածության վրա չկար ո՛չ ծառ, ո՛չ թուփ…>>:

Հայ գյուղացու վիճակից անտեղյակ էին ոչ միայն քաղաքաբնակ հարուստները, այլև ինքը՝ <<անձնազոհ երիտադարդը>>:

Առաքյալը վիպակում հիմնականում ռեալիստորեն պատկերելով իրականությունը՝ Մուրացանը գյուղում գործելու առաքելությունը դնում է նյութական կարիքից ազատ բուրժուական ինտելիգենցիայի վրա. բայց միաժաման իբրև ռեալիստ ցույց է տալիս, որ դա անհնար է. այդ ինտելիգենցիան ընդունակ չէ նման անձնազոհության: Պեդանտի անուն հանած Պետրոս Կամսարյանը, ի զարմանս բոլորի, ուսանողական հավաքույթում հայտնում է, թե ինքը ավարտական քննություններից հետո պետք է գնա գյուղում գործելու՝ հատկացնելով այդ նպատակին նաև հարուստ ծնողներից իրեն հասանելիք ժառանգությունը: Նա Մուրացանի հետ միասին այն կարծիքին է, թե գյուղացու ծանր դրության պատճառը նրա <<տգետ և անուսում>> լինելն է: Գյուղացիները կարող են ազատվել կյանքի դառնություններից և հասնել երջանիկ դրության, եթե <<խելոք գլուխները մտածեն նրանց մասին, և կարող ձեռքերն աջակցեն նրանց աշխատության>>: Ինքը ունի կարող ձեռքեր և խելոք գլուխ, ուրեմն պետք է գնա գյուղ գործելու:

Մոսկվայից հայրենիք վերադառնալու ճանապարհին Կամասարյանը կազմում է իր գործունեության ծրագիրը՝ գյուղական հասարակության իրավունքների

պաշտպանություն, լուսավորության գործի հիմնադրություն և գյուղացու տնտեսական դրության բարվոքում: Կամսարյանին այնքան է հրապուրում <<մեծ գործի>> իր ծրագիրը, որ սկսում է փայփայել առաքյալի փառք ու հռչակ ստանալու հույսը:

Առաջին փորձությունը տեղի է ունենում տանը, ծնողների մոտ: Վերջիններիս զարմացնում է, որ իրենց Պետոն փոխանակ դատարաններում <<ժամերով>> ճառեր ասելու և դրա համար հազարներ ստանալու, մտածում է <<կոռների>> ու նրանց հոտած գյուղերի մասին: Իբրև նոր գայթակղություն՝ Պետրոսի մայրը հիշեցնում է գեղեցկուհի Ադելինայի և նրա 40.000 ռուբլի օժիտի մասին: Թուլակամ Կամսարյանը տատանվում է և միայն նոթերի տետրը ձեռքն առնելով ու իր կազմած ծրագիրը կարդալով է կարողանում դիմանալ այդ գայթակղությանը: Այնուհետև Մուրացանը երգիծանքով է նկարագրում նրա ճանապարհի պատրաստությունները: Հայ գյուղում գործելու համար նա վերցնում է որսի հրացան, հունգարական թամբ, հեռադիտակ, կողմնացույց, գյուղացիների համար որսի շների տեսակների և որսորդության ու գինեգործության մասին ռուսերեն լեզվով գրված ձեռնարկներ: Պարզ է, որ Կամսարյանը չգիտեր՝ ուր է գնում և ինչու:

Նա չգիտեր հայ գյուղի ու գյուղացու մասին գրեթե ոչինչ: Մուրացանն ասում է, որ նա կարդացել է <<Վերք Հայաստանի>> գիրքը, բայց այդ էլ չի երևում: Այսպես, օրինակ՝ Կամսարյանը չխոսկան կանանց տեսնելով, նրանց համրի տեղ է դնում: Գյուղում գործել ուխտած այդ երիտասարդը չի կարող տանել իր հետ միասին կառքում նստած տիրացու Մոսիի վրայից եկող քրտինքի հոտը:

Չիբուխլու հասած ոռպեից նրան տիրում է կանխահաս վհատությունը, թե անհնար է գործել այդ գյուղ կոչված <<ավերանոցում>>: Մի պահ նրա մեջ կռվում են գաղափարական և անձնասիրության <<ես>>-երը, և հաղթանակը մնում է անձնասիրության <<ես>>-ին: Մի փոքր ավելի գյուղական կյանքին ծանոթանալուց հետո, երբ առանց վախենալու նրա իրավաբան լինելուց լվերը ծծում են նրա արյունը, իսկ <<անիծուկ կովը>> յուր բառաչով խանգարում է <<աղի>> երազը

Բորժոմի և Ադելինայի մասին, Կամսարյանը փախչում է գյուղից՝ ծրագրերով լցված նոթատետրը գետը նետելով: Մուրացանը գերադասել է լռել Կամսարյանի փախուստին նախորդած հոգեկան ապրումների մասին, <<որպեսզի, եթե երբևիցե նման ոգևորությամբ վառվին ուրիշ երիտասարդներ, նրանց անծանոթ մնա առաջին ոգևորվողի հուսահատ տրտունջը>>:

Չիբուխլուում քնած ժամանակ Բորժոմ երազող Կամսարյանը վերջապես Բորժոմում է: Այդտեղ նա իրեն զգում է այնպես, ինչպես ձուկը՝ ջրում, և զարմանում գյուղում գործելու իր <<հիմար>> ցանկության վրա: Նա փայլուն կավալեր է, պարերի աննման դիրիժոր. <<լավ է վայելել, քան թո մտածել>>,- վճռում է Կամսարյանը և նշանվում գեղեցկուհի Ադելինայի հետ: <<Իսկ Չիբուխլուն... Սևանը,- հարցնում է Մուրացանը, և ինքն էլ պատասխանում. <<Նրանք դարձյալ մնացին իրենց տեղն անշարժ, անփոփոխ, ինչպես հարազատ մասունք անփոփոխելի հավիտենականության...>>:

Մուրացանը այն միամիտ և սխալ կարծիքն ուներ, թե առանձին անհատները, եթե ցանկանան, կարող են գյուղացու դրությունը բարվոքել: <<Առաքյալ>>-ում Սայու և Խոջայի միջադեպով Մուրացանը ցանկանում է ասել, թե Կամսարյանը շնորհք ունի, կարող է գյուղում գործել, բայց չի ցանկանում: Դա ցավ է պատճառում հեղինակին: <<Առաքյալը>> վիպակում նկատելի է անհատական հայացքների ազդեցությունը՝ ինտելիգենցիայի դեպի գյուղ գնալը, անհատի դերի գերագնահատումը, գյուղը քաղաքից պատնեշելու, քաղաքին հակադրելու տենդենցը:

<<Առաքյալ>>-ում հիմնականում հաղթանակեց Մուրացանի ռեալիզմը: Չիբուխլուի պատկերում, ինչպես արևը մի կաթիլ ջրում, արտացոլված է անսահման կարիքի ու հետամնացության մեջ գտնվող հայ գյուղի պատկերը:

Վիպակում Մուրացանը կերտել է բազմաթիվ տիպեր: Պետրոս Կամսարյանը, նրա մայրը, Մոսին, Սային, Խոջան, Պետին, տեր Վանին ունեն ռեալիստական նկարագրեր: <<Առաքյալ>>-ում Մուրացանը հաջող կերպով է օգտագործել ժողովրդական ասացվածքները, առակներն ու բարբառները:

Վիպակին ծանոթանալուց, սյուժեն ուսումնասիրելուց հետո դասարանը կբաժանենք չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին կտրվի մեկ հարց, որին խումբը պետք է տա լիարժեք պատասխան, պատասխանելու ընթացքին պետք է մասնակցեն խմբի բոլոր մասնակիցները, թեկուզ մեկ նախադասությամբ: (աշակերտների կարողությունները և հմտությունները տարբեր են):

**1**. Ի՞նչ է ռոմանտիզմը:

**2.** Ինչպիսի՞ն էր հայ գյուղը ըստ Մուրացանի <<Առաքյալը>> վիպակի:

**3.** Բնութագրել Պետրոս Կամսարյանին:

**4.** Ի՞նչ կանեիք դուք, եթե կանգնեիք նման խնդրի առջև:

Առաջին հարցին խումբը կպատասխանի մոտավորապես այսպես.

Մենք գիտենք, որ ռոմանտիզմը, ինչպես և կլասիցիզմը, իր ժամանակի հասարակական- քաղաքական ցնցումների ծնունդ էր, որն արտացոլվեց 18-19րդ դարերի մշակույթում: Այն առաջացավ Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, այնուհետև տարածում ստացավ ԱՄՆ-ում և Ռուսաստանում: Ռոմանտիկների աշխարհայացքով էր պայմանավորված ողջ մշակույթի, փիլիսոփայության և արվեստի զարգացումը: Միաժամանակ այն ուներ մեկ ընդհանուր աշխարհընկալում, այսինքն յուրաքանչյուր երևույթ և իրադարձություն նորովի էր ներկայացվում՝ լուսավորական գաղափարներով, որոնք դարձել էին Ֆրանսիական հեղափոխության զենքը և քարոզում էին հավասարություն, եղբայրություն և ազատություն: Ժամանակի ընթացքում ապացուցվեց, որ այն իրագործել չի լինում, որն էլ առաջացրեց խորը հիասթափություն, և այդ պայմաններում լուսավորական գաղափարները շատերի համար դարձան պատրանք: Բոլոր ռոմանտիկներին բնորոշ էր հակակրանքը դեպի տառապանքներով լեցուն կյանքը, բռնությունները, պատերազմները, շահագործումներն ու անարդարությունները: Այդ բոլորին նրանք հակադրում էին մտացածին, գեղեցիկ երանգներով լի աշխարհը, որտեղ տիրում է սերը, բարիքը և ազնվությունը:Ռոմանտիկ ստեղծագործողը կյանքը վերակերտում էր իրականի և

ցանկալիի հակադրումով, նրանք կյանքը պատկերում էին այնպես ինչպես ցանկալի էր, այլ ոչ թե այնպես, ինչպես իրականում այն կա:Նրանցից ոմանք գեղեցիկը փնտրում էին անցյալում, տագնապալից աշխարհից հեռու:Նրանք ստեղծում էին հերոսներ, որոնք հանդես էին գալիս արտասովոր կամ խորհրդավոր իրավիճակներում:Հերոսը կարող էր լինել միջնադարյան ասպետ կամ միայնակ խռովարար, որը շատ ազնիվ էր , քաջ, արդարամիտ և անձնազոհ անձնավորություն: Ռոմանտիկ հերոսները, ի տարբերություն կլասիցիզմի հերոսների, գործում էին ոչ թե բանականությամբ, այլ սրտի թելադրանքով: Խորապես դժգոհ իրականությունից՝ ռոմանտիկ գրողները ստեղծում էին ցանկալի կյանքի գեղեցիկ, բայց շատ կողմերով անիրագործելի և անորոշ պատկերը: Ինչպես նշվում է՝ «որքան բարդ ու հակասական էր ժամանակաշրջանի սոցիալքաղաքական կյանքը, նույնքան էլ բարդ ու հակասական էր նույն հանգամանքներից ծնունդ առած մտավոր շարժումը՝ ռոմանտիզմը»:

Ռոմանտիզմը ելնում էր իրականության և իդեալի սուր հակադրության գիտակցությունից: Գրողի գեղեցիկ ու վսեմ իդեալը չէր համապատասխանում շրջապատին: Չգտնելով կյանքում իդելականի իրական մարմնավորումը՝ ռոմանտիկները հաճախ էին երևակայության օգնությամբ գեղարվեստական պատկերները լրացնում: Ռոմանտիկական կերպարը ոչ միայն իրականության որոշ կողմերի արտացոլումն է, այլև իր վրա կրում է գրողի ցանկության, երազանքի կնիքը: Ցանկալին ներկայացվում է իրական, և դա զգալիորեն մեծացնում է երևակայության դերը ստեղծագործության մեջ: Ռոմանտիզմի այս սկզբունքը շատ լավ ձևակերպված է Ռաֆֆու «Կայծեր» վեպում: «Գրողը,– նշում է վիպասանը,– ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մեջ դեռ ծնված չէին, այլ ապագայում պետք է հայտնվեին: Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մեջ այդ չծնված տիպարների ամենափոքրիկ նշմարները միայն: Նա մարգարեի հոգով նախատեսում էր, թե տարիներից, գուցե դարերից հետո որպես այդ նշմարները իրենց սաղմնական դրությունից կաճեն, կզարգանան, կկերպարանագործվեն և կատարյալ կազմություն ու ձև կստանան,– և

նրանց պատկերները կանխապես նկարում է և դնում է ժամանակի հասարակության առջև: Ճշմարիտ բանստեղծը գիտե անցյալը, գիտե ներկան, գիտե և ապագան»[1]:

Ռոմանտիզմի բնորոշ գծերից մեկն էլ սուբյեկտիվությունն է, հեղինակի անհատականության ակտիվ միջամտությունը: Ռոմանտիկական ստեղծագործություններում հեղինակի սուբյեկտիվ մոտեցումը հաճախ իրեն է ենթարկում կերպարի օբյեկտիվ բովանդակությունը: Հերոսը զարգանում է այնպես, ինչպես գրողն է ցանկանում կամ ընկալում դա, և ոչ թե միջավայրի ու հոգեբանության իրական տրամաբանության համաձայն: Այդ է պատճառը, երբ ռոմանտիկական կերպարները հանկարծակի վերափոխության են ենթարկվում, նրանց էությունը տրամագծորեն շուռ է գալիս, ինչպես օրինակ՝ Ժավերը, Ժան Վալժանը Հյուգոյի «Թշվառներ», Թովմաս էֆենդին Ռաֆֆու «Խենթը» ստեղծագործություններում: Սուբյեկտիվությունը ռոմանտիկական որոշ երկերում հանգեցնում է հեղինակի և հերոսի քնարական նույնացման, երբ փաստորեն ջնջվում են հեղինակի և հերոսի միջև եղած սահմանները: Դա առավելապես բնորոշ է ռոմանտիկական պոեմներին (Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի», Բայրոնի «Չայլդ Հարոլդ» և այլն): Ռոմանտիկ գրողները մեծ ուշադրություն էին դարձնում հերոսի բարդ ներաշխարհի, նրա զգացմունքների պատկերմանը: Ինչպես Բելինսկին է նշում, «ռոմանտիզմի ոլորտը մարդու ամբողջ ներքին սրտառուչ կյանքն է, հոգու և սրտի այն խորհրդավոր հիմքը, որտեղից բարձրանում են բոլոր անորոշ ձգտումները դեպի լավագույնն ու վսեմը՝ աշխատելով բավականություն գտնել երևակայության կերտած իդեալներում»: Անհատի ներաշխարհի լայն պատկերումը մեծ տեղ էր գրավում ռոմանտիկական ստեղծագործություններում:

Ռոմանտիկական ստեղծագործությունների մյուս բնորոշ հատկանիշը կյանքի սուր հակադրությունների պատկերումն էր: Հակադրվում էին մի կողմից բացասական, մյուս կողմից՝ իդեալական հերոսները, հերոսի արտաքինն ու ներքին հոգեկան

վիճակը: Ամենից հատանշականը միայնակ հերոսի և շրջապատի հակադրությունն էր: Շրջապատի կաշկանդիչ պայմաններին հակադրվում էր ռոմանտիկ հերոսի ազատասիրական ձգտումը, մարդկանց սառնությանը և անտարբերությանը՝ նրանց հոգու բացավառ կիրքը և այլն:

Երկրորդ հարցին խումբը ավելի ընդարձակ պատասխաններ կտա, քանի որ արդեն խոսվել է Չիբուխլուի հետամնաց ապրելակերպի, գյուղական կյանքի խեղճության, բնակավայրի անշուք և կեղտոտ վիճակի մասին: Իսկ ամենակարևորը այնտեղ ապրող մարդկանց խեղճությունը և տգիտությունն է, որի պատճառով նրանք գտնվում են չափազանց ծանր վիճակում: Ելնելով վիպակի սյուժեից՝ խումբը կներկայացնի գյուղի ոչ բարեկեցիկ, վանող և խղճուկ վիճակը:

Երրորդ հարցին խումբը կպատասխանի՝ կրկին հիմնվելով Մուրացանի նկարագրությունների և Կամսարյանի գործելակերպի վրա:

Կերպարը զարգանում է հոգեկան հակասությունների բացահայտման միջոցով: Մուրացանը նուրբ դիտողականությամբ ցուցադրում է բուրժուական մտավորականի խոսքի ու գործի հակասությունը: Կամսարյանը որոշում է օգնել հայ գյուղացուն, բայց նրան դեպի գյուղն է մղում ոչ թե ժողովրդասիրությունը, այլ եսասիրությունը: Նա երազում է դառնալ հռչակավոր մարդ՝ առաքյալ, որի մասին խոսեն բոլորը, Կամսարյանը գյուղի մասին որևէ հաստատուն տեղեկություն չունի: Այս աշխարհին նա ծանոթացել էր միայն գրքերի ու հոդվածների միջոցով: Հենց առաջին իսկ քայլերից նրա հոգում սկսում են կռվել երկու ես՝ «բարի, գաղափարական եսը» և «անձնասիրության եսը»: Նա անվերջ երկմտում է ու տատանվում: Այնքան թույլ է նրա որոշումը, որ ծնողների խնդրանքին և գեղեցիկ Ադելինայի հրապույրին դիմանալու համար ամեն անգամ վերցնում և կարդում է <<Վերք Հայաստանին>> կամ իր ծրագերի հուշատետրը: Կամսարյանը ծանոթանում է այդ ավերանոցին, գյուղի կյանքին ու մարդկանց, նախատում տանուտերին, քահանային, տիրացու Մոսիին գյուղի կեղտոտության ու տգիտության համար: Բայց ամեն անգամ

տգետ գյուղացիները նրան ծանր վիճակի մեջ են դնում՝ ներկայացնելով իրենց հետամնացության ու խեղճության իրական պատճառները։ Գյուղացուն հարկավոր են նեցուկ ու պաշտպան, կրթված ուսուցիչ ու ուսումնարան, բայց աղքատ մարդիկ այդ ամենն ստեղծել չեն կարող։ Գյուղի մարդիկ տանջվում են չինովնիկների ու վաշխառուների ճիրաններում, բայց նրանց իրավունքը ոչ ոք չի պաշտպանում։ Կարող են, արդյո՞ք, կամսարյանները օգտակար լինել գյուղին։ Այդ հարցին հեղինակը տալիս է դրական պատասխան։ Կամսարյանը փրկում է աղքատ գյուղացի Սայու ընտանիքը խոջա Միրզայի ճանկերից՝ պաշտպանելով օրենքն ու իրավունքը։ Ամբողջ գյուղը օրհնում է բարերար երիտասարդին, և մի պահ արթնանում է «գաղափարական եսը»։ Մտածում է, որ երեկվա իր կարծիքները գյուղի մարդկանց օգնելու անհնարիության մասին ճիշտ չէին։ «Այսօր ահա նա կատարեց մի գործ, որը յուրմով լուծեց մահու կյանքի խնդիր։ Նա վերահաս կործանումից ազատեց մի ընտանիք, և դրա համար քիչ կամ գրեթե ոչինչ աշխատության գործ դրավ...»։ Գիշերը խորհրդածելով օրվա դեպքերի մասին՝ նա մի պահ գտնում է, որ պետք է հնարավոր դարձնել գյուղում ապրելն ու գործելը, հարկավոր է մնալ և փրկել կործանվող ընտանիքներին, պաշտպանել անզոր գյուղացու դատը, փոխել ուսուցանելու վայրենի եղանակը։ Բայց գիշերը ազնիվ խոհերը տեղի են տալիս, երբ բարձրանում է լուսինը, նորից երևում է Չիբուխլուն՝ իր չոր ու անհրապույր տեսարաններով, աթարի դեզերով։ Կամսարյանն անմիջապես փոխում է իր կարծիքը։ Գլխավոր կերպարը կերտված է երգիծական նուրբ հնարքներով, յուրաքանչյուր մանրուքի մեջ բացահայտվում է Կամսարյանի բնավորության ծաղրելի գիծը։ Այն մարդը, որ որոշել է գյուղը փրկել խավարից ու աղքատությունից, սարսափում է, երբ տան կտուրից հող է թափվում գլխարկի ու կոստյումի վրա։ Փափկակենցաղ ու բծախնդիր երիտասարդը գյուղացու տանը ուտում է միայն ձու՝ մտածելով, թե կեղևի միջով կեղտը չի կարող անցնել։

Չորրորդ հարցին խումբը, ելնելով վիպակի բովանդակությունից, մոտավորապես կպատասխանի այսպես.

Այսօր՝ 21-րդ դարում, արդիական չեն ո՛չ Չիբուխլուն, ո՛չ էլ Կամսարյանի նմանները: Մենք ուրախ ենք, որ ապրում ենք այնպիսի Հայաստանում, որտեղ չկան նմանատիպ խղճուկ բնակավայրեր: Անգամ Հայաստանի ամենահեռավոր գյուղերը ունեն հեռուստացույցից, հեռախոսներից, համացանցից օգտվելու հնարավորություն: Ապրում են նորմալ տներում, ունեն գեղեցիկ կահավորված դպրոցներ, որտեղ ուսանում են երեխաները: Եթե վիպակում նկարագրված ժամանակաշրջանում Կամսարյանի նման կրթված անհատները եզակի էին, այսօր եզակի կարող են լինել կրթությունից դուրս մնացած անհատները: Սակայն եթե լիներ իրավիճակ, որ օգնություն անհրաժեշտ լիներ որևէ բնակավայրում, մեզանից յուրաքանչյուրը կներդներ իր գիտելիքները, պատրաստակամ ձևով կկանգներ ցանկացած հայի կողքին, նաև կսովորեցներ այդպիսի մարդուն, որ ինքն իրեն արժևորել կարողանա, կարողանա պաշտպանել իր իրավունքները:

Այս նյութը կարող է ունենալ դաստիարակիչ նշանակություն և մարդկանց ստիպել հասկանալ, որ պետք է լավ սովորեն և՛ դպրոցում, և՛ բուհերում, և՛ մասնագիտական ցանկացած հաստատությունում: Նաև մենք հղում ենք ուղարկում Պետրոս Կամսարյանին. <<Պարո՛ն պեդանտ, դու քո ժամանակին ճիշտ քայլեր չկատարեցիր, բայց մենք տարիների և դարերի հեռավորությունից հասկանում ենք քեզ: Նաև ուզում ենք քեզ հաղորդել, որ քո երազանքը՝ բանկային գործի նախատիպ ստեղծելու գաղափարը իրականություն է դարձել մեր երկրում. Գործում են բազմաթիվ բանկեր, բայց նրանք էլ նման են քո ժամանակի անհոգի վաշխառուներին. Անհրաժեշտ դեպքում մարդուց կարող են խլել ամեն ինչ>>;

Մենք պատրաստակամ ենք օգնելու ցանկացած մարդու, ով դրա կարիքը ունի, միայն մեր հնարավորությունների չափով:

# Եզրակացություն

Ներկայացնելով Մուրացանի <<Առաքյալը>> վիպակը՝ ցանկացել եմ ընդգծել հայ գրականության մեծերից մեկի՝ Մուրացանի մարդասիրությունը, անհանգստությունը իր ժամանակի հայ գրողի տխուր վիճակի, գյուղացու թշվառության, վաշխառուների անմարդկային վերաբերմունքի նկատմամբ:

Ճիշտ է, միամտություն էր հեղինակի կողմից արտահայտված ցանկությունը, որ գյուղը անհրաժեշտ է հեռու պահել կապիտալիզմի մուտքից, քաղաքային բարքերից (դա իհարկե անհնարին էր), սակայն գնահատում ենք հեղինակի մեծ մարդասիրությունը և անհանգստությունը:

Մուրացանի գլխավոր հերոսը՝ Պետրոս Կամսարյանը, այն մարդկանցից էր, որ կարող էր գեղեցիկ քայլեր անելու ցանկություն արտահայտել, բայց այդ նախաձեռնության հիմնական նպատակը իր անձը ցուցադրելու ցանկությունն էրև ոչ թե անհանգստությունը մարդկային դժբախտության հանդեպ: Ճիշտ է, նա խելացի է, նպատակային, բայց անձնասիրությունը Պետրոսի մոտ առաջնայինն է, և նա պատրաստ չէ ապրել նման գյուղական թշվառ պայմաններում: Նա հեռանում է գյուղից՝ անհամբեր սպասելով հասնելու իրեն յուրահատուկ միջավայրին, իր սիրած աղջկան և այն հասարակությանը, որին պատկանում է;

Մուրացանը շարունակեց հավատալ ուսյալ և անձնազոհ անհատների կատարելիք անձնվեր գործերին, հայ գյուղացու փրկության միամիտ գաղափարին: Այնպես, ինչպես Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը ողջ կյանքում մնաց սպասելով սիրած կնոջը, չհամակերպվեց ընտանեկան դժբախտության հետ, անպատասխան սերը դարձավ նրա կյանքի ուղեկիցը, այդպես էլ նրա սիրելի գյուղը մնաց նույն թշվառ վիճակում: Հայ գյուղացին շարունակեց տառապել վաշխառուների ձեռքին, մի կերպ ապահովել իր օրվա մի կտոր հացը, ֆիզիկական և հոգեկան տանջանքի ենթարկվել պաշտոնյաների ձեռքին:

Հետագայում Չիբուխլու գյուղը անվանվեց Ծովագյուղ, և տեղական իշխանությունները գյուղում կանգնեցրին Մուրացանի արձանը՝ ընդհանրացնելով նրա կատարած քայլը և իրենց գյուղը հասարակությանը ներկայացնելով:

# Գրականություն

1.Մուրացան երկեր ԴԳ <<Առաքյալը>> վիպակը <<Լույս>> հրատարակչություն 1980

2.Գայանե Մկրտչյան <<Մեզ ծանոթ և անծանոթ գրողները>>Երևան 2014

3.Եվա Մնացականյան Հայ գրականության հարցեր և պատասխաններ Երևան <<ՎՄՎ-ՊՐԻՆՏ>> 2011

4.Հ. Բախչինյան, Ս. Սարինյան, Հայ գրականություն 10 (հումանիտար հոսք) 2014